ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ՕՐՀՆՈՒԹՅԱՆ ԳԻՐԸ ԳՈՒԳԱՐՔԻ ԹԵՄԻ ԱՌԱՋՆՈՐԴ ԳԵՐԱՇՆՈՐՀ Տ. ՍԵՊՈՒՀ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՋՈՒԼՋԵԱՆԻՆ՝ ԻՋԵՎԱՆԻ Ս. ՆԵՐՍԵՍ ՇՆՈՐՀԱԼԻ ԵԿԵՂԵՑՈՒ ՕԾՄԱՆ ԱՌԹԻՎ

ՍԻՐԵՑԵԱԼ ՈՐԴԻՈՅ ՄԵՐՈՒՄ ԵՒ ՀԱՐԱՋԱՏԻՆ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՅ ՍՐԲՈՅ ԷՋՄԻԱԾՆԻ *ԳԵՐԾ. Տ. ՍԵՊՈՒՀ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՋՈՒԼՋԵԱՆԻՆ* ԱՌԱՋՆՈՐԴԻՆ ԳՈՒԳԱՐԱՅ ԹԵՄԻ ՈՐ Ի ՎԱՆԱՁՈՐ, Ի ՄԱՅՐ ՀԱՅԱՍՏԱՆ

Մի նոր էջ է բացւում Ձեր Թեմի ներկայ ժամանակների պատմութեան մէջ: Մի լուսաւոր էջ, որտեղ Քրիստոսի սուրբ հաւատքը, մեր Հայց. Առաքելական եկեղեցու Հայրերի տաւնդութեամբ թրծուն թափանցում է մի անգամ ևս Գուգարաց Թեմի սիրեցեալ և հաւատացեալ ժողովրդի կեանքում, Իշևան քաղաքում Ս. Ներսէս Շնորհալի անուամբ նորակառոյց եկեղեցու օծման հոգելից և հոգեշէն առիթով:

Մեր ուրախութիւնը անսահման է, բայց ոչ անխառն: Մի կողմից հրնւում ենք տեսնելով քրիստոնէական հաւատի վերակենդանացումը և վերածաղկումը Ձեր Թեմի մէջ և, միւս կողմից, ցաւում ենք որ զուտ առողջական պատճառներով հեռու լինելով Մայր Հայաստանից և Մայր Աթոռ Ս. Էջմիածնից չենք կարողանայ անձնական ներկայութեամբ վայելել Ձեր, Թեմական իշխանութեան և հոգևորական դասու ու հաւատացեալ ժողովրդի հոգևոր անկարագրելի ցնծութիւնը:

Զգում ենք որ այդ նորաշէն եկեղեցին պիտի դառնայ մի մշտահոս սուրբիւր հոգևոր բարիքների մեր ժողովրդի անհատական, ընտանեկան և ազգային կեանքում: Այնտեղ Աստծու շնորհը Ս. Թորհուրդների կատարմամբ պիտի ծաւալուի մեր ժողովրդի կեանքի առուակների մէջ: Այնտեղ Աստծու խօսքը Աւետարանի քարոզութեամբ պիտի դառնայ հոգևոր և բարոյական զօրացման և հարստացման մղիչ ոյժ: Նոր շունչ պիտի մտնի յատկապէս մեր երիտասարդ և մատղաշ սերնդի կեանքում: Եկեղեցու նիւթեղէն շինութիւնը պիտի պսակուի մեր ժողովրդի հոգևոր և բարոյական շինութեան գեղագանց սրժէքներով:

Հայրապետական բարձրագոյն աստիճանի գնահատական Մեր խօսքն ենք ուղղում եկեղեցու բարերարներին՝ բարեպաշտ և ազնուաբոգի Տէր և Տիկին Գէորգ և Պերճուհի Ներսէսեաններին, որոնք իրենց սէրը յայտնեցին այդպիսի պերճախօս և գործնական ձևով ստանձնելով նիւթական միջոցները եկեղեցու կառուցման: Աղօթում ենք որ Բարձրեալն Աստուած նրանց շնորհի երկար կեանք առողջութեան և երջանկութեան բարիքներով առլցուն:

Մեր հայրական գնահատանքի խօսքը նաև Գանատայի Հայոց Առաջնորդ՝ Գերշ. Տ. Յովնան Արքեպիսկոպոս Տէրտէրեանին, որ մեծ դեր կատարեց այս աստուածահաճոյ և ազգաշէն գործի իրականացման համար:

Մեր գնահատանքը Ձեզի որպէս ժրաջան Առաջնորդի Դուգարաց վիճակի, Ձեր շուրջ բոլորուած հոգևորականներին և Թեմական Խորհրդի անդամներին և բոլոր խաղաղային իշխանութեանց ներկայացուցիչներին, որոնք սատար հանդիսացան այս օգտաշատ և երախտարժան գործին:

Սիրելիք, եկեղեցու շինութեան բուն գործը սկսում է հիմա: Շէնքը պէտք է շնչաւորել ամէն կիրակի և տօնական օրերին Ս. Պատարագ մատուցելով, աղօթք ընծայելով և Աստծու խօսքին ունկնդիր մնալով: Եկեղեցին իր իսկութեանը մէջ եկեղեցի կը լինի երբ ծեր կեանքը միախառնուի եկեղեցու կեանքին:

Ցուսալով մօտաւոր ապագային անձամբ այցելել և Մեր խօսքը ուղղել Ձեզի և հաւատացեալներին:

Մնամք հայրական սիրոյ ջերմ ողջունիւ,

Աղօթարար՝

ԳԱՐԵԳԻՆ Ա
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Տուաւ Օրհնութեան Գիրս
ի 18 Յուլիս 1998
ի Մայրավանս Սրբոյ Էջմիածնի
Ընդ համարաւ Է/131